

ՀԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱԻ (ԱՍ) ԵՐԿԲԱՐԲԱՌԱԿԵՐՊԻ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հին գրական հայերենի «V + S» կաղապարին վերաբերող *ալ* (այ) երկբարբառակերպը բառի կազմում հանդիպում է հնարավոր բոլոր երեք դիրքերում՝ բառասկզբի, բառամիջի և բառավերջի: Եթե առաջին երկու դիրքերում այն նախորդում է բաղաձայն հնչյունի (հմմտ. *ալգուտ*, *ալդ*, *ալծումն*, *ալտար* և այլն, *արալր*, *ծանալթ*, *հալտ*, *եղբալր* և այլն), ապա բառավերջում հանդիպում է պայմականորեն փակ վանկում, որքանով *լ* (*յ*) կիսաձայնը հին հայերենում չի ունեցել վանկարար գործառույթ, հետևաբար նրանով ավարտվող վանկը չի կարող բաց համարվել: Ի տարբերություն բառասկզբի դիրքի, ուր *ալ* (այ)-ը պարզապես բառը բաղադրող հնչյունական (/հնչույթային) հաջորդականություն էր, որի բաղադրիչներն ունեին հնչարտաբերական սերտ միասնություն, ապա բառամիջի և բառավերջի դիրքերում այն կարող էր իրականացնել նաև քերականական գործառույթ, այսինքն՝ համարժեք լինել ձևակազմական ձևույթի (հմմտ. *հալր* (*հայր*-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.) *ազգալ* (*ազգ*-ի եզ. թ., գործ. հլ.), *Հոմերալ* (*Հոմերոս*-ի եզ. թ., գործ. հլ.) և այլն): Ըստ ավանդական հայերենագիտության ներկայացուցիչների՝ երկու ձայնավորի միջև դիրքում *լ* (*յ*)-ի և հաջորդող ձայնավորի առնչությունը երկու առանձին հնչույթների հարաբերակցություն էր, իսկ մեր կարծիքով այդ դիրքում ևս կիսաձայնը կազմավորում է երկբարբառակերպ, որն արդեն վերաբերում է «V+S» կաղապարին (հմմտ. *ա-լագ*, *նա-լագ*, *ա-լեթ*, *բե-լեռ*, *բա-լիդ*, *շա-լիդ*, *թագա-լոր*, *լուսա-լոր* և այլն, ուր առկա են *լա* (*լա*), *լե* (*լե*), *լի* (*լի*), *լո* (*լո*) երկբարբառակերպները):

Բանալի բառեր – *համաժամանակյա բնութագիր, երկբարբառակերպ, հնչույթակերպ, հնչույթային գործառույթ, հնչույթաբանական հակադրություն, Աճառյան, Աղայան*

Վարդան Պետրոսյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության եւ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

Вардан Петросян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

Vardan Petrosyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ vz.petrosyan@mail.ru ORCID ID: <https://orcid.org/0000-0002-6141-5504>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.09.2025

Գրախոսվել է՝ 10.02.2026

Հաստատվել է՝ 12.03.2026

© The Author(s) 2026

Հին հայերենի *աւ* (au) երկբարբառակերպը (ավանդական ըմբռնումով՝ երկբարբառը) հայերենագիտության մեջ առաջին անգամ տարբերակվել է 19-րդ դ. կեսերին, ըստ ամենայնի՝ Ա. Բագրատունու քերականության մեջ, և այդ շրջանից սկսած իր հաստատուն տեղն է գրավել գրաբարի նկարագրական քերականություններում ու դասագրքերում՝ *եւ* (eu), *իւ* (iu), *այ* (ai), *ոյ* (oi) երկբարբառակերպների և *եա* (ea) երկբարբառի հետ միասին¹: Ինչպես նշված չորս երկբարբառակերպները (այսինքն՝ բացառությամբ *եա* (ea) երկբարբառի), *աւ* (au)-ը ևս վերաբերում է «V + S» կադապարն ունեցողներին՝ այդպիսով կազմավորելով առանձին դաս գրաբարյան հայերենի՝ այլ կադապարների վերաբերող երկբարբառակերպների մեջ²:

Աւ (au)-ը հանդիպում է բոլոր երեք դիրքերում. 1) բառասկզբի (հմմտ. *աւզնել* «աջակցել», *աւզուտ* «շահ. եկամուտ», *աւզտել* «օգուտ տալ», *աւղ* «կոշիկ», *աւղի* «ոչխար», *աւղիկ* «ոչխարի մորթի», *աւթ* «գիշերելը. օթևան», *աւր* «օր», *աւծումն* «օծելը, օծվելը», *աւձ* «օձ», *աւձտել* «գատել. խելքից հանել», *աւտար* «ոչ հարագատ», *աւրէն* «սահմանված կարգ. օրենք» և այլն). 2) բառամիջի (հմմտ. *աղաւնի* (-նոյ/-նոյ) «աղավնի թռչունը», *արաւր* «հողը հերկելու պարզ գործիք», *ծաւնաւթ* «ծանոթ, մտերիմ. հայտնի», *կարաւտ* «որևէ բանի կարիք», *հաւտ* «ընտանի կենդանիների խումբ. հավատացյալ ժողովուրդ», *եղրաւր* (*եղրայր* բառի եզ. թ., սեռ.-տր. հլ.), *հաւր* (*հայր* բառի եզ. թ., սեռ.-տր. հլ.), *մաւր* «ցելի, տիղմ, ճահճուտ», *մաւր* (*մայր* բառի եզ. թ., սեռ.-տր. հլ.), *նաւթ* «քարյուղ», *պաշտաւն* «պաշտամունք», *տաւթ* «շոգ, տապ», *տաւն* «հանդիսավոր օր», *տաւղել* «տավիղով նվագել», *ցաւղ* «շաղ», *քաւշ* «արու այծ, նոխագ» և այլն). 3) բառավերջի (հմմտ. *ագգաւ* (*ագգ* «ցեղ, տոհմ» բառի եզ. թ., գործ. հլ.), *գրաւ* «գրավական. կանխավճար», *դաւ* «դավաճանություն», *թաւ* «թանձր, խիտ», *լաւ* «բարի. առաքինի», *կաքաւ* «կաքավ թռչունը», *կաւ* (-ք) «տիղմ, ցելի», *հաւ* (-ու, -ուց) «պապ», *հաւ* (-ու, -ուց) «թռչուն», *հաւ* (-ի, -աց) «ծայր, սկիզբ», *նաւ* «նավ», *ամաւ* (*ամ* «տարի» բառի եզ. թ., գործ. հլ.), *շարաւ* (-ոյ) «թարախ. գարշահոտություն», *տիտանաւ* (*տիտան*-ի «»եզ. թ., գործ. հլ.), *քաղաքաւ* (-ք) (*քաղաք*-ի հզն. գործ. հլ.), *Արշակաւ* (*Արշակ*-ի եզ. թ., գործ. հլ.), *Հոմերաւ* (*Հոմերոս*-ի եզ. թ., գործ. հլ.) և այլն):

Վերոհիշյալ օրինակները հիմք են տալիս արձանագրելու հետևյալ իրողությունները. 1) բոլոր երեք դիրքերում էլ *աւ* (au)-ը հնչյունակապակցություն (իմա՝ հնչույթակապակցություն) է, որը հանդիպում է ինչպես փակ վանկում՝ բաղաձայնին նախորդող դիրքում (հմմտ. *աւզ-նել*, *աւզ-տել*, *աւղ*, *աւձ-տել*,

¹ Տե՛ս **Բագրատունի Ա.** (1852): Հայերեն քերականություն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, էջ 3:

² Պատմահամեմատական հայերենագիտությունը հաստատել է, որ *աւ* (au)-ը սերում է հ.-ե. հիմք-լեզվի երկբարբառային համակարգից, մասնավորապես հ.-ե. **au* (/ **āu*) երկբարբառից, հետևաբար հայերենի ամենից վաղ առաջացած բարդ հնչույթային կազմավորումներից է (տե՛ս **Պետրոսյան Վ.** (2023): Հ.-ե. երկբարբառային համակարգից սերած երկբարբառակերպները հին հայերենում (տարածամասնակյա և ապաժամանակյա քննություն) // *ԲԵՀ. Բանասիրություն*, թիվ 3 (42), էջ 41-42):

աւր, *ծա-նաւթ*, *կա-րաւտ*, *հաւտ*, *տաւթ*, *տաւն*, *քաւշ* և այլն), այնպես էլ պայմանականորեն բաց վանկում, երբ երկբարբառակերպն ինքնուրույնաբար վանկ է կազմում, կամ երբ վանկն ավարտվում է երկբարբառակերպով (հմմտ. *աւգուտ*, *աւ-դի*, *աւ-դիկ*, *աւ-ծու-մ(ը)ն*, *տաւ-դել*, *աւ-տար*, *աւ-րէն*, *ագ-գաւ*, *գ(ը)-րաւ*, *դաւ*, *կա-քաւ*, *հաւ*, *նաւ* և այլն)³. 2) բառամիջի և բառավերջի դիրքերում հանդիպում է նաև քերականական գործառույթով, այն է. ա) ներքին թեքման ենթարկվող մի քանի գոյականների եզ. թ. սեռ.-տր. հոլովում՝ որպես *j > i* հերթագայության արդյունք (հմմտ. *եղբայր-եղբաւր*, *հայր-հաւր*, *մայր-մաւր*), բ) *ի-ա* խառն (արտաքին) հոլովման ենթարկվող գոյականների եզ. և հզն. թվերի գործ. հոլովում՝ որպես քերականական ձևույթ, որ ունի «բնի ձայնավոր (հոլովիչ) + հոլովակերտ մասնիկ» («ա + լ») կառուցվածք (հմմտ. *ագատաւ(-ք)*՝ *ագատ-տ*-ից «ազնվական. ինքնիշխան», *ամաւ(-ք)*՝ *ամ*-ից «տարի», *աւրիորդաւ(-ք)* (*Օրիորդաւ(-ք)*)՝ *աւրիորդ*-ից «կույս. ազնվագարմ չամուսնացած աղջիկ», *գուսանաւ(-ք)*՝ *գուսան*-ից «երգող և նվագող մարդ», *իրաւ(-ք)*՝ *իր*-ից «իրոք. ճշմարիտ», *հրամանաւ(-ք)*՝ *հրաման*-ից «կարգադրություն. պատվիրան», *մրրկաւ(-ք)*՝ *մրրիկ*-ից «մրրիկ. փոթորիկ», *պարտիգաւ(-ք)*՝ *պարտէզ*-ից «այգի. բանջարանոց», *տիտանաւ(-ք)*՝ *տիտան*-ից «հսկա», *քաղաքաւ(-ք)*՝ *քաղաք*-ից «քաղաք. քաղաքի բնակչությունը», *Արշակաւ*՝ *Արշակ*-ից, *Հովերաւ*՝ *Հովերոս*-ից և այլն): Բառավերջի դիրքում *աւ* (աւ)-ը և՛ որպես հնչյունների կապակցություն՝ առանց ձևույթային գործառույթի (հմմտ. *գ(ը)-րաւ*, *թաւ*, *կա-քաւ*, *կաւ* և այլն), և՛ որպես քերականական գործառույթով ձևույթ (հմմտ. *ագ-գաւ*, *ա-մաւ*, *տի-տա-նաւ*, *քա-դա-քաւ*, *Ար-շա-կաւ* և այլն. բոլորն էլ համապատասխան գոյականների եզ. թ., գործ. հլ. ձևերն են) ամբողջությամբ վերաբերում է միննույն վանկին, ի տարբերություն, օրինակ, *աւազ* (-ի, -աց) «առաջինը. երեցը», *աւեր* «քանդված», *բէւեռ* (-ի) «գամ, մեխ», *բաւիղ* «լաբիրինթոս», *նաւազ* (-ի, -աց) «նավաստի», *շաւիղ* (-ւղի, -ղաց) «արահետ», *տաւիղ* (-ւղի, -ղաց) «տասնաղի քնար», *թագաւոր* (-ի) «արքա, միապետ», *իջաւոր* «իջևանած ուկոր», *լուսաւոր* «լուսատու» տիպի օրինակների, ուր *ւ* (ւ)-ը կապակցություն է ձևավորում ոչ թե նախորդող *ա*-ի, այլ հաջորդող վանկին վերաբերող *ա*, *ե*, *ի*, *ո* ձայնավորների հետ (հմմտ. *ա-ւազ*, *ա-ւեր*, *նա-ւազ*, *բա-ւիղ*, *շա-ւիղ*, *տա-ւիղ*, *թագա-ւոր*, *իջա-ւոր*, *լուսա-ւոր* և այլն): Ըստ այդմ՝ առկա է ոչ թե *աւ* (աւ) երկբարբառակերպ, այլ *ւա* (ւա), *ւե* (ւե), *ւի* (ւի), *ւո* (ւո) երկբարբառակերպներ: Իսկ, օրինակ, *բաւղակ* «ծածկված մութ տեղ», *շաւղակոխել* «անցուղարձի ճանապարհ դառնալ», *տաւղի* (*տաւիղ*-ի եզ. թ., սեռ.-տր. հլ.) բառերում (բառաձևերում) առկա է *աւ* երկբարբառակերպը (հմմտ. *բաւ-ղակ*, *շաւ-ղա-կո-խել*, *տաւ-ղի*):

³ Այդպիսի վանկերը «պայմանականորեն բաց» ենք անվանում այն առումով, որ դրանց երկրորդ՝ կիսաձայնական բաղադրիչին չի հաջորդում որևէ բաղաձայն, ինչպես նախորդ տիպի դեպքերում (հմմտ. *աւգ-տել*, *աւթ*, *ծա-նաւթ*, *հաւտ* և այլն): Իրականում այդպիսի վանկերը նույնպես փակ են, որովհետև վանկի եզրային՝ կիսաձայնական բաղադրիչը վանկարար հնչյուն չէ:

Է. Աղայանը, առաջնորդվելով երկբարբառի տարբերակման՝ Շ. Հյուբշմանի սկզբունքով, բառավերջի և ձայնավորին նախորդող դիրքերում *աւ*-ը համարում է *ա* (*a*) և *ւ* (*u*) հնչյունների պարզ հաջորդականություն՝ ձայնորդական բաղադրիչի համար առաջարկելով շրթնատամնային *v*-ով տառադարձում, այսինքն՝ [av], [iv] արտասանություն⁴: Նախ՝ բառավերջի դիրքում ևս *աւ*-ը կարող է լինել փակ վանկում, երբ ստանում է հոգնակերտ *-ք* (*k'*) (հմմտ. *ղաւք* (*ղաւ* «ղավաճանություն» բառի հզն. թ., անվն. հլ.), *ամաւք* (*ամ* «տարի» բառի հզն. թ., գործ. հլ.), *գրաւք* (*գրաւ* «կանխավճար» բառի հզն. թ., անվն. հլ.), *գուսանաւք* (*գուսան* բառի հզն. թ., գործ. հլ.), *թաւք* (*թաւ* «թանձր» բառի հզն. թ., անվն. հլ.), *հրաւք* (*հրաւ* բառի հզն. թ., անվն. հլ.), *կաքաւք* «Լ. (*կաքաւ* բառի հզն. թ., անվն. հլ.)» II. կաքավի պէս ուստոստելով պարելը», *կաւք* (*կաւ* «տիղմ» բառի հզն. թ., անվն. հլ.), *հրամանաւք* (*հրաման* բառի հզն. թ., գործ. հլ.), *մրրկաւք* (*մրրկիկ* բառի հզն. թ., գործ. հլ.) և այլն): Բացի այդ, ինչպես արդեն նշեցինք, գրաբարյան հայերենում *ւ* (*u*)-ը չունեւր վանկարար արժեք, ըստ այդմ՝ նրանով ավարտվող վանկն ինքնին փակ էր, այլ ոչ թե փակվում էր միայն աջից հավելյալ բաղաձայն հնչյուն, օր.՝ *-ք* (*k'*) հոգնակերտ, ստանալու դեպքում: Այս հարցում մեր և Է. Աղայանի տարբերումների հիմքում ընկած է երկու կարևոր հանգամանք. 1) Է. Աղայանը, առաջնորդվելով դեռևս 19-րդ դ. սկզբներից հայերենագիտության մեջ ձևավորված ավանդույթով, ձայնավորի և ձայնորդի կապակցությունը համարում է երկբարբառ, առանց հաշվի առնելու, որ ձայնորդները գրաբարում չեն ունեցել վանկարար արժեք, ուստի այդպիսի հնչյունակապակցությունները երկբարբառ համարելը հակասում է երկբարբառի որպես *մեկ վանկի կազմում երկու վանկարար հնչյունների միասնական արտաբերությամբ հատկանշվող միավորի*՝ իր իսկ առաջարկած սահմանումին⁵, 2) հնչույթաբանորեն *ւ* (*u*)-ը կիսաձայնական արժեք է ունեցել բոլոր դիրքերում, այդ թվում՝ բառավերջի⁶, որովհետև բաց վանկում *ւ* (*u*)-ի՝ հնարավոր շրթնատամնային երանգ ձեռք բերելը (իսկ դա չպիտի բացառել) հնչյունաբանական երևույթ է, այլ ոչ թե հնչույթաբանական: Այն, որ բաց վանկում *ւ* (*u*)-ի արտասանությունը կարող էր շրթնատամնային արտաբերության միտում դրսևորել, դրա վկայություն կարող է համարվել, թերևս, աշխարհաբարյան փուլում (ըստ էության՝ միջին հայերենից սկսած) ինչպես ձայնավորանախորդ, այնպես էլ բառավերջի դիրքում *ւ* (*u*) > *վ* (*v*) հնչյունափոխությունը (հմմտ. *աւազ* > *ավազ*, *նաւազ* > *նավազ*, *անիւ* > *անիվ*, *թիւ* > *թիվ*, *լաւ* >

⁴ Տե՛ս Է. Աղայան Է. (1964): Գրաբարի քերականություն, Եր., էջ 119:

⁵ Տե՛ս Է. Աղայան Է. (1987): Լեզվաբանության հիմունքներ, Եր., էջ 226:

⁶ Շ. Աճառյանը ևս «նույնիսկ բառերի վերջում» մերժել է *ւ* (*u*)-ի բաղաձայնական, այն է՝ շփական *վ* (*v*) արտաբերությունը՝ *աւ* (*av*), *եւ* (*ev*), *իւ* (*iv*) երկբարբառակերպների (ըստ Շ. Աճառյանի՝ երկբարբառների) *ւ*-ին վերագրելով *ու* (*ou*) հնչյունական արժեք. հմմտ. «au, eu, iu (*ա՛ու, է՛ու, ի՛ու*) և ոչ բնավ *av, ev, iv*» (տե՛ս Աճառյան Շ. (1984): Հայոց գրերը, Եր., էջ 588): Ընդհանուր շարադրանքից ակնհայտ է, որ նշված «երկբարբառների» *ու* (*ou*)-ին նա վերագրում է ոչ թե ձայնավորական, այլ կիսաձայնական հնչյունական արժեք:

լալ, կալ > կալ/և այլն): Գործառական տեսանկյունից, սակայն, դա չի կարող ազդել միավորի լեզվական արժեքայնության վրա, այն է՝ այդ դիրքում հանդիպող շրթնատամնային երանգով Վ/[v] հնչյունը կիսաձայն լ [լ] հնչյութի դիրքային տարբերակը՝ այլահնչակն էր, այլ ոչ թե՝ նոր հնչյութ:

Ինչ վերաբերում է ձայնավորանախորդ դիրքում ա (a) և լ (լ) հնչյունների հաջորդականությանը (հմմտ. աւագ, աւագ, նաւագ և այլն), այդ հարցի ամբողջական քննությունը լա (լա) երկբարբառակերպի տիրույթում է, թեև արդեն իսկ մասնակիորեն արծարծվեց:

Հակադրվելով Հ. Աճառյանի տեսակետին, ըստ որի՝ բառավերջի դիրքում՝ եզ. թ. գործ. հլ.-ում, նույնպես ալ (ալ)-ն ունեցել է երկբարբառային արտաբերություն, Է. Աղայանը հարց է առաջադրում, թե այդ դեպքում ինչու -ք հոգնակերտից առաջ թաւք, կաքաւք, հաւք ձևերը չեն դարձել թթթ, կաքթթ, հոքք: Այսինքրն՝ ինչու նշված ձևերում ալ (ալ)-ը օրինաչափորեն չի դարձել պարզ օ [o] ձայնավոր: Ըստ Է. Աղայանի՝ դա տեղի չի ունեցել, որովհետև հոգնակերտ -ք-ից առաջ արտաբերվել է ը [ə], ինչպես՝ հալ(ը)ք [havək⁴], հալ(ը)ս [havəs]: Ինչպես Է. Աղայանը, այնպես էլ Է. Թումանյանը դրանով են բացատրում նաև աղաւնի [aʎəni], նաւթ [naɣt⁴] բառերում ալ [ալ] > ալ/[av], այլ ոչ թե ալ [ալ] > օ [o] անցումը, չնայած որ որոշ բարբառներում նշված բառերն ունեն նաև աղօնի(կ) [aʎoni(k)] / աղունիկ [aʎunik], նօթ [not⁴] արտասանությունը⁸:

Մեր կարծիքով, այսօրինակ բացատրություններում բավարար չափով հաշվի չեն առնվում որոշ հանգամանքներ: Այն է.

1) Հենց նշված օրինակները վկայում են, որ ալ [ալ] > օ [o] հնչյունական անցումը (իմա՝ օրենքը՝ Վ.Պ.) բացարձակ չէր, առնվազն բարբառներում եղել են նրանից շեղումներ, որոնցից յուրաքանչյուրն առանձին քննության նյութ է: Բացի այդ, եթե իսկապես աղաւնի, հաւք, հաւս բառերը (/բառաձևերը) ունեցել են [աղաւնի / aʎəni], [հաւք / havək⁴], [հաւս / havəs] հնչյունները, ապա, ըստ մեր սկզբունքի, կարող է խոսք լինել ոչ թե ալ (ալ), այլ լք (լք) երկբարբառակերպի տարբերակման մասին, որովհետև միևնույն վանկում կարտաբերվեն լ (լ) և ը (ə) հնչյունները, այլ ոչ թե՝ ա (a)-ն և լ (լ)-ն: Բայց քանի որ հին հայերենի երկբարբառները գնահատելու հարցում ավանդական պատկերացումներով առաջնորդվող հայերենագետները, այդ թվում՝ Է. Աղայանը, հեռու են դրանք արմատապես վերագնահատելու մտքից⁹, ընդհանուր առմամբ մնում են «ձայնավոր + ձայնորդ» հնչյունակապակցությունները երկբարբառ համարելու տեսակետին, բնականաբար հակված են իրողությունները բացատրելու ավանդական պատկերացումների տրամաբանությամբ:

⁷ Տե՛ս Աղայան Է., Գրաբարի քերականություն, էջ 120:

⁸ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 119-120, Туманян Э. (1971). Древнеармянский язык. М., էջ 30:

⁹ Հանուն արդարության պիտի ընդունել, որ Է. Աղայանն առաջինն է այդ պատկերացումներում նորամուծություններ կատարել՝ տարբերակելով զգալի թվով նոր երկբարբառներ և եռաբարբառներ (տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 102-140):

2) Գրաբարյան հնչույթների, մասնավորապես բաղադրյալ միավորների (=երկբարբառային, երկբարբառակերպային և այլն կազմությունների) հնչունական արժեքների, ավելի պարզ նրանց արտասանության մասին մեր պատկերացումներն ուղղակի կամ անուղղակի կերպով միջնորդավորված են դրանց ավանդական (իմա՝ աշխարհաբարյան փուլում ձեռք բերած՝ Վ.Պ.) հնչարտաբերությամբ: Ըստ այդմ, *հաւք*-ի համար ենթադրվող *հաւ(ք)ք* [havək^ˈ] և *հաւս*-ի համար ենթադրվող *հաւ(ք)ս* [havəs] արտասանությունները հազիվ թե կարելի է համարել այդ բառաձևերի գրաբարյան ճիշտ հնչարտաբերությունը: Կարծում ենք՝ այդօրինակ բացատրություններում անտեսվում կամ բավարար չափով հաշվի չի առնվում մի կարևոր հանգամանք. գրաբարյան *ւ* (յ)-ը ինքնուրույն հնչույթ էր՝ միայն իրեն բնորոշ հնչարտաբերական բնութագրերով, որը հատկապես փակ վանկում չէր կարող նույնանալ շրթնատամնային արտաբերություն ունեցող ձայնեղ շփական *վ* [v]-ի հետ. *ւ* (յ)-ը երկշրթնային ձայնորդ էր և ունեցել է մոտավորապես անգլերենի *w* [w]-ին բնորոշ հնչարտաբերություն: Ըստ այդմ, ավելի հավանական է, որ *աղանի*, *նաւթ*, *հաւք*, *հաւս* բառերն ու բառաձևերն ունեցել են [aʎauni], [naut^ˈ], [hauk^ˈ], [haus] տառադարձումներին մոտ արտասանություն, որի դեպքում, բնականաբար, ձայնորդի և հաջորդող բաղաձայնի միջև հավելյալ *ք* (ə) արտասանելու անհրաժեշտություն չի զգացվել:

3) Նախորդ կետում ասվածից հետևում է նաև, որ գրաբարյան հնչույթների հնչարտաբերական հարցերը քննելիս ենթագիտակցորեն մեր պատկերացումների վրա ազդում են դրանց ավանդական, ըստ էության՝ փոփոխված արտասանությունները՝ ինքնաբերաբար դառնալով մեկնության ելակետ: Հետևաբար կարևոր նշանակություն ունի նաև, թե այդ հնչույթները գրաբարյան հայերենից մինչև աշխարհաբար փոփոխությունների ինչ ճանապարհ են անցել, պատկերավոր ասած՝ ինչ հնցով են անցել: Է. Աղայանը, օրինակ, *թագ* [t^ˈag] «արքայական խույր» բառարմատից կազմված *թագաւոր* [t^ˈagavor] «արքա. միապետ» բառում [q/g] > [p/k^ˈ] հնչունափոխությունը, այսինքն՝ ձայնեղ *գ*-ի վերածվելը շնչեղ խուլ *ք*-ի (հմտ. [թաքավոր / t^ˈak^ˈavor]) բացատրում է ժողովրդախոսակցական լեզվի, այլ կերպ՝ բարբառային խոսքի ազդեցությամբ, իսկ *թագակիր* [t^ˈagakir] բառում նրա ձայնեղության պահպանումը՝ այդ բառի նորակազմ լինելու, որ նույնն է, թե՛ ժողովրդախոսակցական լեզվի բովով անցած չլինելու հանգամանքով¹⁰: Կարծում ենք՝ սկզբունքորեն ընդունելի բացատրություն է¹¹, սակայն՝ ոչ բավարար, եթե նկատի ունենանք, որ,

¹⁰ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 328:

¹¹ Է. Աղայանը այդօրինակ երևույթները բնորոշում է «ազատ լծողություններ» տերմինային արտահայտությամբ (տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 328): Տվյալ դեպքում գործ ունենք նաև ձևահնչույթաբանական հերթագայության հետ, թե՛ ոչ կախված է այն բանից՝ *թագաւոր* բառի կազմում հնչող [p/k^ˈ]-ն (գրային *գ*-ն) կհամարվի <Գ> հնչույթի դիրքային տարբերակ, թե <Ք> հնչույթի: Այս տեսանկյունից հայերենի հնչույթային համակարգը, ըստ իս, դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ:

օրինակ, թագ բառարմատից կազմված թագուհի [t'aguhɪ] «կին թագավոր. թագավորի կին կամ մայր» բառում, որը նույնպես ավանդված է գրաբարյան տեքստերում¹², այսինքն՝ նորակազմ բառ չէ, դարձյալ *գ* [g]-ն պահպանել է ձայնեղությունը: Թագ և թագաւոր բառերում գրաբարյան *գ* [g]-ի դրսևորած արտասանական վարքագիծը հասկանալու առումով կարևոր նշանակություն ունեն նրա բարբառային զարգացումները: Ըստ այդմ՝ թագ-ը հանդիպում է ոչ միայն ձայնեղ [g] (հմմտ. թագ (Մղր.))¹³, այլև շնչեղ ձայնեղ [g^h] (հմմտ. թագ՝ (Ալշ., Ջղ.))¹⁴, ոչ շնչեղ խուլ [k] (հմմտ. թակ (Ախց., Կր., Մշ., Շմ.))¹⁵, շնչեղ խուլ [k^h] (հմմտ. թաք (Հմշ., ՆՆխ., Պլ., Ռոդ., Սեբ., Սուչ., Առտ.), թոք (Ձեյթ.))¹⁶, նույնիսկ քմայնացումով զուգակցվող շնչեղ խուլ [k^h] (հմմտ. թոքի (Վան, Մոկք, Ոզմ))¹⁷ տարբերակներով, իսկ թագավոր-ը, շնչեղ խուլից բացի (հմմտ. թաքավոր (Արամ), թաքավո՛ր (Մղր.), թոքոյոր (Վան), թաքավոր (Պլ., Շապ.-Կար., Ուրմ.), թրքավոր (Լոռ. ի.) և այլն)¹⁸, հանդիպում է նաև ոչ շնչեղ խուլ (հմմտ. թակավոր (Վան), թակավոր (Մոկք)), քմայնացած շնչեղ խուլ (հմմտ. թաքյաւոր (Ոզմ), թաք՛աւիթր (Քեւ.))¹⁹, քմայնացած ձայնեղ [g] (հմմտ. թագ՛ավիթր (Սուչ.))²⁰ և շնչեղ ձայնեղ հնչյունական տարբերակներով (հմմտ. թագ՛ավիթր (Ձեյթ.), թագ՛ավոր (Առտ.), թագ՛ըվէօր (Ասլ.), դ՛ագ՛ավոր (Ջղ.))²¹: Հնչյունական անցումների այս բազմազանությունն առաջին հայացքից խնդրահարույց է թվում որոշակի եզրակացություն անելու համար, բայց հարցը կարող է հանգուցալուծվել վիճակագրական քննության միջոցով: Այսպես, ըստ Գ. Ջահուկյանի կազմած աղյուսակների՝ «ոչ բառասկզբի դիրքում» գրաբարյան *գ* [g]-ն շնչեղ խլացման է ենթարկվել 120 բարբառախոս վայրերից 89-ում (դրանք նշված են + նշանով) և երկակի վարքագիծ է դրսևորել 18-ում (±), իսկ ձայնեղությունը պահպանել է միայն 13-ում (-): Ընդ որում, խլացումը առկա է

¹² Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի (1979): Է. 1, Եր., էջ 791, Առձեռն բառարան հայկազեան լեզուի (1988): Անթիլիաս, էջ 516, Ղազարեան Ռ. (2004): Գրաբարի բառարան, Անթիլիաս, էջ 475:

¹³ Տե՛ս Աղայան Է. (1954): Մեղրու բարբառը, Եր., էջ 269:

¹⁴ Տե՛ս Աճառյան Հ. (1973): Հայերեն արմատական բառարան, հ. 1, Եր., էջ 136:

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

¹⁶ Տե՛ս Աճառյան Հ. (1953): Քննություն Վանի բարբառի, Եր., էջ 259, նույնի՝ (1947): Քննություն Համշենի բարբառի, Եր., էջ 229, նույնի՝ (2021): Քննություն Նոր-Նախիջևանի բարբառի, Եր., էջ 232, նույնի՝ (2003): Քննություն Կիլիկիայի բարբառի, Եր., էջ 309, նույնի՝ ՀԱԲ, նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Աճառյան Հ. (1953): Քննություն Վանի բարբառի, Եր., էջ 259:

¹⁸ Տե՛ս Ղարիբյան Ա. (1958): Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Եր., էջ 62, Աղայան Է., Մեղրու բարբառը, էջ 269, Ասատրյան Մ. (1962): Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., էջ 195, նույնի՝ (1968): Լոռու խոսվածքը, Եր., էջ 181, Ջահուկյան Գ. (1972): Հայ բարբառագիտության ներածություն, Եր., էջ 45-62, Մարկոսյան Ռ. (1989): Արարատի բարբառը, Եր., էջ 301:

¹⁹ Տե՛ս Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, էջ 259, Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 125:

²⁰ Տե՛ս Աճառյան Հ., Քննություն Կիլիկիայի բարբառի, էջ 567:

²¹ Տե՛ս Աճառյան Հ., Քննություն Կիլիկիայի բարբառի, էջ 309, նույնի՝ (1953): Քննություն Առտիակի բարբառի, Եր., էջ 265, նույնի՝ ՀԱԲ, նույն տեղում:

երկու գրական լեզուների՝ արևելահայերենի և արևմտահայերենի հիմքում ընկած բարբառներում՝ Արարատյան և Պոլսի²²: Սակայն, եթե այս վիճակագրական քննությունը կարող է հիմք ընդունվել *թագավոր* բառի կազմում [q/g] > [p/k^ʰ] հնչյունափոխությունը բացատրելու համար, նույնը հնարավոր չէ ասել *թագ* բառում *q* [g]-ի ձայնեղության պահպանվելու առնչությամբ: Միաժամանակ հիմքեր չկան պնդելու, որ *թագ*-ի *q* [g]-ն ձայնեղությունը պահպանել է, որովհետև գտնվում է բացարձակ բառավերջի դիրքում, իսկ *թագավոր*-ի *q* [g]-ն ենթարկվել է (շնչեղ) իլացման, որովհետև, գտնվելով ձայնավորանախորդ դիրքում, կարող էր կրել հնչյունափոխական հավելյալ ազդեցություններ, օր.՝ առնմանական, տարնմանական, քմայնացում և այլն, քանզի նույն՝ բառավերջի դիրքում դարձյալ կան *q*-ի՝ և՛ ձայնեղությունը պահպանելու, և՛ *p* (k^ʰ)-ի հնչյունափոխվելու օրինակներ (հմմտ. *արագ* [արագ], *հանգ* [հանգ], *նուագ* [նվագ], բայց՝ *աւագ* [ավաք], *կարագ* [կարաք], *կարգ* [կարք] և այլն):

Մեկ այլ օրինակ. «գրաբար» բառի *p* (b)-ն արդի գրական արևելահայերենում ունի երկակի արտասանություն՝ *p* (b)-ի ձայնեղության պահպանումով՝ հետևելով գրությանը, և շնչեղ շուկ *ph* (p^ʰ)-ով (վերջինի աղբյուրը, ըստ ամենայնի, դարձյալ ժողովրդախոսակցական լեզուն է), այն դեպքում, երբ «աշխարհաբար» բառում միանշանակ պահպանվում է միևնույն *-(w)բար* վերջածանցի *p* (b)-ի ձայնեղ արտաբերությունը [աշխարհաբար] (չի բացառվում, որ կարող է հանդիպել նաև *ph* (p^ʰ)-ով [աշխարհափար] արտասանություն, բայց դա պիտի վերագրել բարբառային ազդեցության): Այսինքն՝ առկա է նույն երևույթը, ինչ որ *թագ* և *թագավոր* բառերի դեպքում:

Նշված երևույթի պատասխանը հավանաբար տրամաբանության դաշտում է. այն է՝ չնայած որ և՛ *թագ*-ը, և՛ *թագավոր*-ը հին գրական հայերենի բառապաշարի մաս են կազմել, այլ կերպ՝ արդի գրական արևելահայերենի նորակազմություններ չեն, բայց նայնպես հավանական է, որ առաջինը արևելահայ գրական լեզվին անցել է գրական, իսկ երկրորդը՝ ժողովրդախոսակցական լեզվի ճանապարհով, այսինքն՝ բարբառային միջնորդավորվածությամբ: Թերևս նույնը վերաբերում է *թագուհի* բառին. չի բացառվում, որ *թագուհի*-ն նույնիսկ գործածական չի եղել ժողովրդախոսակցական լեզվում: Առնվազն մեր կողմից դիտարկված բարբառների, այդ թվում՝ Արարատյան և Պոլսի, բառարանային ցանկերում այդ բառը չի հանդիպում:

Բաղադրյալ հնչույթային կազմությունների, մասնավորապես *հնչույթակերպների* (*phonemoids* / *фонемойды*)՝ երկբարբառակերպ, եռբարբառակերպ և այլն, քննությունը հնչույթաբանական հակադրությունների տեսանկյունից (այն գործառական հնչույթաբանության հիմնական պահանջներից է որևէ հնչական բաղադրիչի հնչույթային կարգավիճակը հաստատելու առումով),

²² Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ.:

ինչպես ցույց ենք տվել մեր մեկ այլ ուսումնասիրության մեջ, կիրառելի չէ նշված կազմությունների դեպքում, որովհետև այդ պահանջը ոչ միայն հետևողականորեն չի գործում, այլև ունի խիստ պայմանական բնույթ²³: Հենց այդ պատճառով էլ բաղադրյալ հնչույթային կազմությունները ոչ թե գործառական նվազագույն միավորներ, այն է՝ հնչույթներ են՝ երևույթի ամբողջական նշանակությամբ, այլ հնչույթակերպներ:

Վերոհիշյալ քննությունից մեր հիմնական եզրակացությունը հետևյալն է. 1) *ալ* (ալ)-ը բոլոր դիրքերում երկբարբառակերպ էր, եթե նրա բաղադրիչները արտաբերվել են միևնույն վանկում. 2) հնչույթաբանորեն *լ* (լ)-ը կիսաձայն-ձայնորդ էր բոլոր դիրքերում, սակայն, հնչյունական միջավայրով պայմանավորված, նրա որոշ դիրքային տարբերակներ կարող էին շրթնատամնային երանգ ստանալ (օր.՝ երկու ձայնավորի միջև դիրքում). 3) ձայնավորանախորդ դիրքում, ըստ էության՝ նաև երկու ձայնավորի միջև, *ալ* (ալ)-ի *լ* (լ)-ը անցել է հաջորդ վանկին և երկբարբառակերպ է կազմավորել հաջորդող ձայնավորի հետ: Այդպիսի երկբարբառակերպները վերաբերում են «V+S» կաղապարին:

ВАРДАН ПЕТРОСЯН – Синхронические характеристики дифтонгоида *ալ* (ալ) древнеармянского литературного языка. – Дифтонгоид *ալ* (ալ) древнеармянского литературного языка, относящийся к модели «V + S», в составе слова встречается во всех трех возможных позициях: в начале, в середине и в конце. Если в первых двух позициях он предшествует согласному звуку (ср. *ալգրուլ*, *ալղ*, *ալծուլն*, *ալտար* и др., *արալը*, *ծանալթ*, *հալն*, *կրալը* и др.), то в конце слова он стоит в условно закрытом слоге, поскольку полугласный *լ* (լ) в древнеармянском не имел слогаобразующей функции, поэтому слог, оканчивающийся на него, нельзя считать открытым. В отличие от исходной позиции, где *ալ* (ալ) был просто фонетической (/фонологической) последовательностью, составляющей слово, компоненты которого имели тесное фоноартикулируемое единство, то в серединной и конечной позициях он мог выполнять еще и грамматическую функцию, то есть быть эквивалентным формообразующей морфеме (ср. *հալը* (ед. ч., род.-дат. пад. от слова *հար* «отец»), *ազգալ* (ед. ч., тв. пад. от слова *ազգ* «нация»), *Հովերալ* (ед. ч., тв. пад. от собственной имени *Հովերու* (Гомер)) и т.д.). По мнению представителей традиционного арменоведения, взаимоотношения *լ* (լ) и следующего за ним гласного в позиции между двумя гласными являлись взаимоотношениями двух отдельных фонем, а, по нашему мнению, полугласный в этой позиции также образует дифтонгоид, но относящийся уже к модели «V+S» (ср. *ա-ալգ*, *նա-ալգ*, *ա-ալը*, *բն-ալն*, *բա-ալղ*, *շա-ալղ*, *թագա-ալը*, *րա-ալը* и др., где присутствуют дифтонгоиды *ալ* (ա), *ալ* (а), *ալ* (а), *ալ* (а)).

Ключевые слова: синхроническая характеристика, дифтонгоид, фонемоид, фонемная функция, фонологическая оппозиция, Ачарян, Агаян

VARDAN PETROSYAN – On the Synchronous Characteristics of the Diphthongoid *ալ* (ալ) in Old Armenian. – In Old Armenian, the diphthongoid *ալ* (ալ), which fits the “V + S” pattern (Vowel + Semivowel), can appear in all three possible positions: at the beginning, in the middle and at the end. In the first two positions (word-initial and middle), it typically comes before a

²³ Տե՛ս Պետրոսյան Վ. (2024): Երկբարբառային կազմությունների տեսության հարցեր // ՎԷՄ, թիվ 4 (88), էջ 158-160:

consonant (*compare*: *սւզուտ, սւղ, սւծումն, սւտար*, etc.; *սրար, ծանար, հատ, հրար*, etc.). In final position, it appears in a conditionally closed syllable. This is because the semivowel *լ* (*լ*) in Old Armenian could not function as a syllabic nucleus. Thus, a syllable ending in *լ* (*լ*) could not be considered open. Unlike in the word-initial position, where *սւ* (*սւ*) is simply a sequence of phonetic (or phonemic) elements that make up the word and where the components are tightly linked in pronunciation, in the middle and final positions, it could also take on a grammatical role, i.e., it could act as a morphological marker. (Comp. *հար* – genitive/dative singular of *հայր* (“father”), *սզգաւ* – instrumental singular of *սզգ* (“nation”), *Հոմերաւ* – instrumental singular of *Հոմերոս* (“Homer”), etc.) According to traditional Armenian linguistics, the relationship between the semivowel *լ* (*լ*) and the following vowel when occurring between two vowels was considered a combination of two separate phonemes. However, we believe that even in this position the semivowel forms a diphthongic structure in accordance with the “V + S” pattern. (Comp. *սւ-սազ, նս-սազ, ս-ւեր, բե-ւեռ, բս-ւիղ, շս-ւիղ, թագաւ-տր, լուսս-տր*, etc., where the diphthongoids *սւ* (*սա*), *ւե* (*սե*), *ւի* (*սի*), *ւո* (*սո*) are present.)

Key words: *synchronous description, diphthongoid, phonemoid, phonological function, phonological opposition, Acharian, Aghayan*

Գրականության ցանկ / References

- Աղայան, Է. (1964): Գրաբարի քերականություն, Երևան: (Aghayan, Է. (1964). Grabari k'erakanut'yun, Yerevan) (in Armenian).
- Աղայան, Է. (1954): Մեղրու բարբառը, Երևան: (Aghayan, Է. (1954). Meghru barbařə, Yerevan) (in Armenian).
- Աղայան, Է. (1987): Լեզվաբանության հիմունքներ, Երևան: (Aghayan, Է. (1987). Lezvabanut'yan himunk'ner, Yerevan) (in Armenian).
- Աճառյան, Հ. (1973): Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան: (Achařyan, H. (1973). Hayeren armatakan bařaran, h. 1, Yerevan) (in Armenian).
- Աճառյան, Հ. (1984): Հայոց գրերը, Երևան: (Achařyan, H. (1984). Hayots' gřerə, Yerevan) (in Armenian).
- Աճառյան, Հ. (1953): Քննություն Առտիալի բարբառի, Երևան: (Achařyan, H. (1953). K'nnut'yun Artiali barbaři, Yerevan) (in Armenian).
- Աճառյան, Հ. (2003): Քննություն Կիլիկիայի բարբառի, Երևան: (Achařyan, H. (2003). K'nnut'yun Kilikiayi barbaři, Yerevan) (in Armenian).
- Աճառյան, Հ. (1947): Քննություն Համշենի բարբառի, Երևան: (Achařyan, H. (1947). K'nnut'yun Hamsheni barbaři, Yerevan) (in Armenian).
- Աճառյան, Հ. (2021): Քննություն Նոր-Նախիջևանի բարբառի, Երևան: (Achařyan, H. (2021). K'nnut'yun Nor-Nakhidzhevani barbaři, Yerevan) (in Armenian).
- Աճառյան, Հ. (1953): Քննություն Վանի բարբառի, Երևան: (Achařyan, H. (1953). K'nnut'yun Vani barbaři, Yerevan) (in Armenian).
- Արձեռն բառարան հայկազնեան լեզուի* (1988): Անթիլիաս: (Arđzeřn bařaran haykaznean lezui (1988). Ant'iliias) (in Armenian).
- Ասատրյան, Մ. (1962): Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան: (Asatryan, M. (1962). Urmiai (Khoyi) barbařə, Yerevan) (in Armenian).
- Ասատրյան, Մ. (1968): Լոռու խոսվածքը, Երևան: (Asatryan, M. (1968). Loru khosvatsk'ə) (in Armenian).
- Բագրատունի, Ա. (1852): Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ: (Bagratuni, A (1852). Hayerēn k'erakanut'yun i pēs zargats'elots') (in Armenian).

- Ղազարեան, Ռ. (2004): Գրաբարի բառարան, Անթիլիաս: (Ghazarean, R. (2004). Grabari bařaran, Ant'iliyas) (in Armenian).
- Ղարիբյան, Ա. (1958): Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան: (Gharibyan, A. (1958). Hayeren norahayt barbařneri mi nor khumb, Yerevan) (in Armenian).
- Մարկոսյան, Ռ. (1989): Արարատի բարբառը, Երևան: (Markosyan, R. (1989). Ararati barbař, Yerevan) (in Armenian).
- Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (1979): Հ. I, Երևան: (Nor bařgirk' haykazean lezui (1979). H 1, Yerevan) (in Armenian).
- Պետրոսյան, Վ. (2023): Հ.-ե. երկրաբառային համակարգից սերած երկրաբառակերպները հին հայերենում (տարածամանակյա և ապածամանակյա քննություն) // *ԲԵՀ. Բանասիրություն*, թիվ 3 (42): (Petrosyan, V. (2023). H.-e. erkbarbařayin hamakargits' serats erkbarbařakerper, hin hayerenum // BYH, t'iv 3 (42)) (in Armenian).
- Պետրոսյան, Վ. (2024): Երկրաբառային կազմությունների տեսության հարցեր // ՎԷՄ, թիվ 4 (88): ((Petrosyan, V. (2024). Erkbarbařayin kazmut'yunneri tesut'yan harts'er // VEM, t'iv 4 (88)) (in Armenian).
- Ջահուկյան, Գ. (1972): Հայ բարբառագիտության ներածություն, Երևան: (Dzhahukyan, G. (1972). Hay barbařagitut'yan neratsut'yun, Yerevan) (in Armenian).
- Туманян, Э. (1971). Древнеармянский язык. Москва: (Tumanyan, E (1971). Drevnearmyanskiy yazyk, Moskva) (in Russian).